Հավելված՝
Հայաստանի Հանրապետության Տավուշի
Մարզի Իջևան համայնքի ավագանու
2024 թվականի ապրիլի 26-ի N ..... որոշման

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ
# ԻՋԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔ



# ԻՋԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՄԱՔՐՄԱՆ ՏԵՂԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԼԱՆ
# (2024-2028 թթ.)

## ԻՋԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՒՂԵՐՁԸ



Իջևան համայնքի համար խիստ պատասխանատու և կարևոր աշխատանք է համարվում աղբահանության ծառայության կազմակերպումը: Սակայն դա անարդյունավետ է, եթե չեն մասնակցում համայնքի բնակիչները:

Այսօրվա աղբահանության ծառայությունը խիստ տարբերվում է նախորդ դարաշրջանում մատուցվող ծառայությունից: Այսօր այն դարձել է կառավարման մի տեսակ իր գործիքներով և ձևաչափերով:

Իջևան համայնքի գործունեության հիմնական ուղղություններից են կանաչ տարածքների ընդլայնումը, բնական ռեսուրսների պահպանումը և օգտագործումը, թափոնների կառավարումը, տուրիզմի զարգացումը, որը սերտորեն առնչվում է բնապահպանական խնդիրներին:

Հուսով ենք, որ միջազգային դոնոր կազմակերպությունների ֆինանսական աջակցության դեպքում ոչ միայն կլուծվեն համայնքի ազգաբնակչության համար կենսական այս խնդիրները, այլև կընդլայնվեն համայնքի հնարավորությունները և ավելի լիարժեք կօգտագործվեն Իջևան համայնքի բնական ռեսուրսները:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ՃԱՂԱՐՅԱՆ

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1.ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ……………………………………………………………………………4

2.ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ, ԱՌԱՋՆԱՀԵՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՏԵՍԼԱԿԱՆ……………………………5

3.ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ՏԱՐԱԾՔԻ ԲՆՈՒԹԱԳԻՐ…………………………………………………7

4. ԹԱՓՈՆՆԵՐԻ ՔԱՆԱԿ ԵՎ ԲԱՂԱԴՐՈՒԹՅՈՒՆ……………………………………………9

5.ԹԱՓՈՆՆԵՐԻ ԳՈՐԾԱԾՈՒԹՅՈՒՆ……………………………………………………………10

6.ԻՐԱԶԵԿՎԱԾՈՒԹՅԱՆ ԱՍՏԻՃԱՆ……………………………………………………………15

7.ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ ԵՎ ԲՅՈՒՋԵ………………………………………………………………16

ԳԼՈՒԽ 2 ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ…………………………………………………………………………18

1.ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐ ԵՎ ԿԱՆԽԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ

ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ………………………………………………………………………………18

2.ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ԵՎ ԹԻՐԱԽՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ………………………………………………18

3.ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԼԱՆ……………………………………………………………………21

4. ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ ԵՎ ԲՅՈՒՋԵ……………………………………………………………………22

5.ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԿՈՇՏ ԹԱՓՈՆՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ

ԲՅՈՒՋԵՏԱՎՈՐՈՒՄ…………………………………………………………………………………22

# 1.ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

| | |
|---|---|
| Պլանի անվանում | Իջևան համայնքի Աղբահանության և սանիտարական մաքրման տեղական կառավարման պլան |
| Պլանավորման մեջ ընդգրկված համայնք, բնակավայրեր | ՀՀ Տավուշի մարզի Իջևան քաղաք, Աչաջուր, Այգեհովիտ, Աչաջուր, Գանձաքար, Ազատամուտ, Սևքար, Գետահովիտ, Խաշթառակ, Սարիգյուղ, Կիրանց, Աճարկուտ, Ծաղկավան, Վազաշեն, Դիտավան, Ակնաղբյուր, Լուսահովիտ, Ենոքավան, Լուսաձոր, Բերքաբեր բնակավայրեր |
| Պլանավորման ժամանակաշրջան | 2024-2028 |
| Ներկայացվող Պլանի նախատեսված վերանայման ամսաթվերը | 2025 ապրիլի 26 |
| Պլանը կազմող անձանց անուն, ազգանուն, պաշտոն | • Արարատ Պարոնյան Իջևանի համայնքապետարանի զարգացման ծրագերի, տուրիզմի, առևտրի, սպասարկման և գովազդի բաժնի պետ<br>• Սուրեն Չիբուխչյան ՛՛Իջևանի քաղաքային կոմունալ ծառայություն՛՛ հիմնարկի տնօրեն |
| Պլանը կազմող անձանց էլ. Հասցե և հեռախոս | araratparonyan.66@gmail.com |
| Պլանի էլեկտրոնյաին տարբերակները ներբեռնելու էլ. հասցե | |

Տնտեսական զարգացումը, գիտատեխնիկական առաջընթացը, մարդու պահանջմունքների ավելացումը, բնապահպանական խնդիրները պարբերաբար նոր մարտահրավերներ են առաջացնում տեղական ինքնակառավարման մարմինների և համայնքների համար: Համայնքային տնտեսությունների համար, մասնավորապես անցումային ժամանակահատվածը հաջողությամբ հաղթահարած և նոր զարգացող երկրներում, նոր ենթակառուցվածքների ներդրումը, նորագույն տեխնոլոգիաների կիրառումը տնտեսության բոլոր ճյուղերում գերակա խնդիրներ են հանդիսանում, որոնց ուղղությամբ ելնելով ժամանակակից տենդենցներից՝ իրականացվում են համապատասխան քայլեր: Այդպիսի բազմակողմանի լուծումներ պահանջող կարևորագույն ճյուղերից մեկը կոշտ կենցաղային թափոնների կառավարման համակարգն է, որի արդիականացման ուղղությամբ ներկայումս բոլոր կայուն զարգացման գործընթացներին աջակցող կազմակերպությունների կողմից վարկային և դրամաշնորհային միջոցների հաշվին նորագույն լուծումներ են առաջարկվում:

Կարևորելով վերոգրյալը, ինչպես նաև գիտակցելով Իջևան համայնքում կոշտ կենցաղային թափոնների կառավարման ոլորտում առկա հիմնախնդիրները, համայնքային իշխանությունները խնդրի համապարփակ լուծման նպատակով ձեռնամուխ են եղել աղբահանության ռազմավարության մշակմանը:

## 2. ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ, ԱՌԱՋՆԱՀԵՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՏԵՍԼԱԿԱՆ

ԿԿԹ-ի կառավարումը Հայաստանում շատ ցածր մակարդակում է, որը հանգեցնում է բազմաթիվ բնապահպանական, սոցիալական և առողջապահական խնդիրների առաջացման: Վերջիններս խիստ կապակցված են ռազմավարական ծրագրում ներառված այլ ոլորտներում առկա խնդիրների հետ՝ ջրի, հանքարդյունաբերության, կենսաբազմազանության, կլիմայի փոփոխության, մթնոլորտային օդի, թափոնների և սոցիալ-տնտեսական իրավիճակի: Իջևան համայնքի ԿԿԹ-ի կառավարման պլանի կազմման անհրաժեշտությունը բխում է ոլորտում կիրառվող նոր մեթոդաբանության առկայությունից, որը կանոնակարգում է հանրապետության բնակավայրերում գոյացող աղբի հավաքման, տեղափոխման, պահպանման, տեղադրման (հեռացման), վերամշակման ու օգտահանման գործընթացների պլանավորումն ու մշտադիտարկումը և սահմանում աղբահանության ու թափոնների արդյունավետ կառավարման համար չափորոշիչները:
Հայաստանում աղբահանության և կոշտ թափոնների տեղական կառավարման պլանների (այսուհետև՝ Պլան) կազմումը ՀՀ բնակավայրերում աղբահանության և կոշտ թափոնների կառավարման կայուն և ինտեգրված արդյունավետ համակարգի ներդրման, միասնական քաղաքականության վարման, հանրապետության բոլոր համայնքներում աղբահանության ծառայության մատուցման կայուն որակի ապահովման անհրաժեշտ մեխանիզմ է: Այս պլանը նպատակ ունի ձևավորելու համապարփակ մոտեցում աղբահանության կառավարման ոլորտում, համակարգելու աղբահանության պլանավորումը տեղական ինքնակառավարման մարմիններում, ապահովելու նպաստավոր պայմաններ աղբահանության և կոշտ թափոնների կառավարման կայուն համակարգի ներդրման և թափոնների գործածության ամբողջական շղթայի գործարկման համար:

Իջևան համայնքի կոշտ թափոնների կառավարման համակարգում առկա հիմնախնդիրները կարելի է ամբողջացնել ստորև բերված խմբերով.

Աղբահանության և սանիտարական մաքրման ծառայությունների մատուցման ոչ բավարար,

- Համայնքի տարբեր հատվածներում ծառայությունների մատուցման իրարից տարբերվող մակարդակներ՝ շահագործվող տեխնիկայի քանակի, որակի, տեսականու, տեղադրված աղբամանների ծավալային, տարբերակված, անարդյունավետ տեղադրվածության տեսանկյունից,
- Շահագործվող տեխնիկայի ֆիզիկական մաշվածություն, ոչ մասնագիտացված աշխատակազմ, աշխատանքային վտանգավոր պայմանների առկայություն,
- Ծառայությունների դիմաց աղբահանություն իրականացնող կազմակերպության կողմից հավաքագրումների ցածր տոկոսը և համայնքի բյուջեից սուղ սրբսիդավորումը խոչընդոտում է երկարաժամկետ ներդրումների իրականացումը,
- Ծառայությունների մատուցման ընթացքում վերահսկողության և մոնիտորինգի համակարգերի բացակայություն,
- Համայնքից դուրս տարբեր հատվածներում աղբի կուտակումների առկայություն և կամայական տեղերում և հատկապես Աղստև գետում, աղբանետումներ,
- Աղբի վերամշակման կենտրոնների բացակայություն:

Նշված ուղղություններին համապատասխան ձևակերպվել են 4 երկարաժամկետ (2024-2028թթ.) նպատակներ, հաշվի առնելով Իջևան համայնքի աղբահանության տեսլականը: Ստորև ձևակերպված

յուրաքանչյուր նպատակ ենթադրում է Իջևան համայնքի աղբահանությանը վերաբերող առանձին խնդիրների և նրանցով պայմանավորված կոնկրետ ծրագրերի իրականացում:

Ոլորտային նպատակներն են՝

Ա. Համակարգի զարգացում

Նպատակ 1. Բարելավել Իջևան համայնքի աղբահանության կառավարման համակարգը և ձևավորել համայնքային օրինական դաշտ:

Բ. Աղբահանության կառավարման ենթակառուցվածք

Նպատակ 2. Ուժեղացնել աղբահանության կառավարման ենթակառուցվածքները Իջևան համայնքի ամբողջ տարածքը սանիտարահիգիենիկ պահանջներին համապատասխան սպասարկելու համար՝

հիմնելով աղբի կրճատման, վերամշակման, վնասազերծման և շրջակա միջավայրի պաշտպանությանն ուղղված մշտական գործընթաց:

Գ. Ֆինանսական-տնտեսական արդյունավետություն:

Նպատակ 3. Հասնել աղբահանության կառավարման ֆինանսական կայունությանը:

Դ. Հանրային իրազեկություն և մասնակցություն:

Նպատակ 4. Ապահովել բնակչության մշտական և հետևողական իրազեկումը և մասնակցությունը աղբահանության կառավարման գործընթացում:

*Իջևանը աղբահանության ծառայությունների կազմակերպման օրինակելի, իրազեկ, բարեկարգ համայնք է:*
*Եվ օդը մաքուր, և ջուրը զուլալ…*

| Նպատակ 1. | Նպատակ 2. | Նպատակ 3. | Նպատակ 4. |
| --- | --- | --- | --- |
| Բարելավել Իջևան համայնքի աղբահանության կառավարման համակարգը և ձևավորել համայնքային օրինական դաշտ: | Ուժեղացնել աղբահանության կառավարման ենթակառուցվածքները Իջևան համայնքի ամբողջ տարածքը սանիտարահիգիենիկ պահանջներին համաապատասխան | Հասնել աղբահանության կառավարման ֆինանսական կայունությանը: | Ապահովել բնակչության մշտական և հետևողական իրազեկումը և մասնակցությունը աղբահանության կառավարման գործընթացում: |

## 3.ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ՏԱՐԱԾՔԻ ԲՆՈՒԹԱԳԻՐ

Առաջին անգամ գրավոր աղբյուրներում Քարվանսարա անունը հիշատակվել է ռուսական իշխանությունների կողմից Լոռվա, Գավառի, Ղազախի դիստանցիայում 1817թ. անցկացրած աշխարհագրի կամերալ ցուցակագրության մեջ: Քարվանսարա գյուղի մասին երկրորդ հիշատակությունն առկա է ռուս մեծանուն գրող Ալեքսանդր Գրիբոյեդովի՝Ճանապարհորդական նոթեր՝ -ում, որը նվիրված է դեպի Պարսկաստան նրա ղեկավարած դեսպանական առաքելությանը: Երրորդ անգամ Քարվանսարա անունը հիշատակվում է 1829թ., երբ ռուսական պետությունն Աղստևի հովիտ է ուղարկում երկրաբանական արշավախումբ: Հայ մեծերից առաջինը եղել է Սարգիս Հասան Ջալալյանը, որն իր՝Ճանապարհորդություն իմ Մեծ Հայաստան՝աշխատության մեջ հակիրճ խոսել է Քարվանսարայի մասին: Ի մի բերելով պատմագրական բոլոր աղբյուրները, կարելի է ասել, որ Քարվանսարա-Իջևանը, որպես բնակավայր, հավանաբար, հիմնադրվել է 1807թ.: Տեղի բնակչության ձևավորման գործում կարևոր դեր են ունեցել նաև շրջակա գյուղերի բնակիչները, որոնց կազմում կային 18-րդ դարի վերջերին և 19-րդ դարի սկզբներին Ղարաբաղից տեղահանվածները:

ա. Պլանավորման տարածքի սահմաններ

բ. Աշխարհագրական սահմաններ

Իջևան քաղաքը հանդիսանում է Տավուշի մարզի վարչական, կրթական, մշակութային կենտրոնը: Այն քաղաք-պարտեզ է, շրջապատված անտառածածկ լանջերով, լեռներով, ալպիական մարգագետիններով: Գտնվում է հանրապետության հյուսիսարևելքում, Աղստև գետի հովտում, մայրաքաղաքից 134 կմ հեռավորությանվրա: Բնակչությունը կազմում է 47337 մարդ: Համայնքը զբաղեցնում է 2767 հա տարածք բնակարանային ֆոնդ 291 հա, համայնքի սեփականություն համարվող հողերը 265հա, արտադրական նշանակության 60.9 հա, գյուղատնտեսական նշանակության 155 հա, անտառային գոտիներ 1833 հա, որից 45 հա հանգստի գոտիներ: Իջևան քաղաքն իր աշխարհագրական դիրքի/ ծովի մակարդակից 650-850 մ բարձրություն/ և բնակլիմայական բարենպաստ պայմանների շնորհիվ անցյալ դարի 60-ական թվականներից սկսել է զարգանալ տուրիզմի ուղղությամբ, կառուցվել է տուրիստական կոմպլեքս-հանգրվան, ինը հարկանի հյուրանոց: Իջևան քաղաքի տնտեսությունների թիվը 5094 է: Քաղաքում կան 21 հատ 9 հարկանի և 93 հատ 5 հարկանի բազմաբնակարան շենքեր: Ներհամայնքային փողոցների երկարությունը 42 կմ է: Հիմնվել է դենդրոլոգիական այգի: 1991թ. Իջևանը ստացել է առողջարանի կարգավիճակ: Իջևան համայնքի տարածաշրջանում է գտնվում՝ Ապագա Տուրտուրիստական կազմակերպությունը, որը մեկ տարվա ընթացքում այցելել են շուրջ 50000 զբոսաշրջիկներ, կան բազմաթիվ հյուրատներ: 1985-1991 թթ. Քաղաքում անընդմեջ կազմակերպվել և

անցենկացվել քանդակի միջազգային սիմպոզիումներ, որի համար Իջևանը ստացել է «100 քանդակների քաղաք» անվանումը: Իջևանի մերձական տարածքը հարուստ է պատմական մեծ արժեք հուշակոթողներով: Այստեղ 12-13 դարերում կառուցված Մակարավանք, Հաղարծին, Գոշավանք հայտնի ճարտարապետական համալիրները, բազմաթիվ վանքեր, մատուռներ, ամրոցներ և այլն: Քաղաքը գտնվում է հանրապետական և միջպետական նշանակության մայրուղու վրա և ունի տեղական նշանակության ճանապարհների ցանց:

գ. Ժողովրդագրական տեղեկատվություն

| | Ընդհանուր տարածք | Քաղաքային | Գյուղական | Արդյունաբերական | Գյուղատնտեսական | Կանաչ, անտառային |
|---|---|---|---|---|---|---|
| Տարածքը /հա/ | 7740 | 2768 | 68972 | 522,0 | 27029 | 40462 |
| Տարածքը տոկոսով ընդհանուրից | 100 | 3,9 | 96,1 | 0,7 | 37,7 | 56,4 |

դ. Կոշտ թափոն գոյացնող հիմնական աղբյուրների տեսակը և քանակը

| Գրանցված բնակչության | Փաստացի բնակվող | Տնտեսությունների թիվ | Բազմաբնակարան շենքերի թիվ | Բնակարանների թիվ |
|---|---|---|---|---|
| 47337 | 35460 | 11090 | 149 | 4187 |

# 4. ԹԱՓՈՆՆԵՐԻ ՔԱՆԱԿ ԵՎ ԲԱՂԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Աղբահանության պլանավորման շրջանակներում հատկապես գոյացող թափոնների քանակի ծրագրեր և միջոցառումներ նվազեցման, տեսակավորման, վերամշակման, օգտահանման մշակելիս ու նախատեսելիս՝ առանձնապես կարևոր է թափոնների քանակի և բաղադրության որոշումը:

**ա. Գոյացող թափոնների քանակի ընդունված ցուցանիշներն են.**

• մեկ տարում գոյացող թափոնների ընդհանուր զանգվածը (տոննա/տորեկան)

• մեկ տարում գոյացող թափոնների կշիռը մեկ բնակչի հաշվով (մարդ/կգ/տարի)

• մեկ օրում գոյացող թափոնների կշիռը մեկ բնակչի հաշվով (մարդ/կգ/օր)

Բաղադրությունն ընդունված է ներկայացնել տոկոսով՝ ըստ յուրաքանչյուր բաժնեմասի ընդհանուր զանգվածի չափաբաժնի:

Պլանի մշակման և իրականացման արդյունավետությունը մեծապես կախված է հավաքագրվող որը պետք է լինի հստակ, ճշգրիտ, պարբերական, տվյալները պետք է հավաքագրվեն համայնքի/բնակավայրի տարբեր հատվածներից, տարբեր գործունեություն իրականացնող տնտեսվարողներից, տարվա տարբեր եղանակներին՝ մեկ շնչի հաշվով առաջացող աղբի կշիռը, բաղադրությունը, դրանց հնարավոր փոփոխությունները՝ ըստ սեզոնի և ժամանակահատվածի:

Տեղեկատվության հավաքագրումը և ճշգրիտ գնահատումը հնարավոր է հստակ մեթոդաբանությամբ և պարբերականությամբ նմուշառման և դրա արդյունքների վերլուծության պարագայում: Ընդ որում, նմուշառման պարբերականությունը թափոնների կառավարման համակարգի ներդրման սկզբնական փուլում պետք է լինի տարվա բոլոր սեզոններին՝ թափոնների գոյացման ինտենսիվության գործոններից կախված, իսկ հետագա տարիներին կարելի է նմուշառում իրականացնել որոշակի գործոնների փոփոխությունից կախված, ավելի փոքր պարբերականությամբ:

**բ. Թափոնների բաղադրության հիմնական տեսակները/հոսքերը**

•**Կոշտ կենցաղային թափոն՝** աղբամաններում կուտակվող կոշտ կենցաղային թափոն՝ «Թափոնների մասին» ՀՀ օրենքով սահմանած թափոն,

•**Խոշոր եզրաչափի թափոն՝** 1խմ և ավել ծավալով թափոն, որը չի տեղադրվում աղբամանում, Շինարարարական աղբ՝ քաղաքաշինական և շինարարական գործումեության հետևանքով աառաջացող աղբ,

• **Շահագործումից դուրս եկած ավտոմեքենաներ, մետաղական ջարդոն,**

• **Փաթեթավորման թափոն՝** կոմերցիոն գոտում գոյացող փաթեթավորման թափոն,

•**Էլեկտրական և էլեկտրոնային թափոն** (ԷԷՄ)՝ չշահագործվող սարքավորում, սնուցվում է էլեկտրական ցանցից կամ մարտկոցից,

•**Կենսաբանական թափոն՝** կենդանական ծագման պարենային և ոչ պարենային հումքի վերամշակումից ստացված թափոններ, ինչպես նաև անասնապահական, թռչնաբուծական և ձկնաբուծական ձեռնարկությունների գործունեության հետևանքով առաջացած թափոններ

·**Պարտեզային թափոն**' այգիների, պուրակների և այլ կանաչ տարածքներից հավաքված թափոն, այդ թվում' էտման թափոն, տերևներ և այլ նմանատիպ թափոն,

· **Անվադողեր**' մարդատար, բեռնատար մեքենաների և հեծանիվների շահագործումից դուրս եկած անվադողեր

· **Վտանգավոր թափոն**' (բացի ԷԷՍ թափոնից) ներկեր, քիմիկատներ, դյուրավառ նյութեր, բժշկական թափոն և այլն, հնարավոր ցանկը ներկայացված է հավելվածում:

## 5.Թափոնների գործածություն

Աղբահանության և սանիտարական մաքրման աշխատանքները կատարվում են համայնքի կողմից հիմնադրված «Իջևանի քաղաքային կոմունալ ծառայություն» բյուջետային հիմնարկի կողմից: Հիմնարկն իրականացվում է քաղաքի աղբահանությունը, սանիտարական մաքրումն ու կանաչապատումը: Նշենք, որ կազմակերպության հաստիքային միավորներից միայն մի մասն են զբաղվում աղբահանության և սանիտարական մաքրման աշխատանքներով: Կազմակերպությունը բացի աղբահանությունից, իրականացնում է նաև գերեզմանատների սպասարկում և համայնքի բարեկարգման աշխատանքներ:

Համաձայն արված հետազոտությունների ու վերլուծությունների կենցաղային թափոնների՝ գոյացող ծավալը Հայաստանի Հանրապետությունում կազմում է տարեկան շուրջ 700 հազար տոննա կամ մարդու համար օրական շուրջ 0.6 կգ:

| Թափոնի տեսակ | Աղբի գոյացում 1 շնչի հաշվով, կգ/տարի/մարդ | Աղբի տարեկան գոյացում, տոննա/տարի | Թափոնների գործածության կարճաժամկետ թիրախներ և դրանց հասնելու կարողություններ /2026-2028թթ/ | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | Խառը, չտեսակավորված հավաքում (% ընդհանուր քանակից) | Տեսակավորված հավաքում | Տեղափոխում (% ընդհանուր քանակից) | Վերօգտագործում /կրկնաօգտագործում | Վերամշակում, օգտահանում որպես երկրորդային ռեսուրս | Վնասազերծում/չեզոքացում | Տեղադրում սանիտարական աղբավայրում |
| Կոշտ կենցաղային թափոն, այդ թվում՝ | 241,5 | 11432,19 | 100 % | Տվյալ չկա | Տվյալ չկա | Տվյալ չկ | Տվյալ չկա | Տվյալ չկա | 100 % |

Համաձայն թափոնների տեսակավորման դասակարգման' առանձնացվում են հետևյալ տեսակները և հաշվառման ձևերը,

1. Խոշոր եզրաչափերի թափոն - խոշոր եզրաչափերի թափոնը հիմնականում հեռացվում է տնտեսվարողների կողմից: Հաշվառում չի իրականացվում:

2. Շինարարական աղբ - հիմնականում հեռացվում է տնտեսվարողների կողմից: Հաշվառում չի իրականացվում:

3. Շահագործումից դուրս եկած ավտոմեքենաներ, մետաղական ջարդոն - հիմնականում հեռացվում է տնտեսվարողների կողմից: Հաշվառում չի իրականացվում:

4. Անվադողեր - հիմնականում հեռացվում է տնտեսվարողների կողմից: Հաշվառում չի իրականացվում:

5. Փաթեթավորում և փաթեթվածք - հիմնականում հեռացվում է տնտեսվարողների կողմից: Հաշվառում չի իրականացվում:

6. Էլեկտրական և էլեկտրոնային թափոն: Հաշվառում չի իրականացվում:

7. Կենսաբանական թափոն: Հաշվառում չի իրականացվում:

8. Վտանգավոր թափոններ: Հաշվառում չի իրականացվում:

Իջևան համայնքում աղբի հաշվառումն իրականացվում է ըստ ծավալի՝ համապատասխան կշեռքների բացակայության պատճառով:

### ա) Աղբահանության և կոշտ թափոնների հետ գործածություն

- **Աղբահանություն և կոշտ կենցաղային թափոնների հավաքում**

ՀՀ Իջևան համայնքում աղբի հավաքումը կատարվում է՝ փողոցներում և բակերում տեղակայված աղբամաններից, բնակելի տներից և կազմակերպություններից գրաֆիկով կամ անհրաժեշտության դեպքում պատվերով եկող աղբատարների միջոցով, ինքնափոխադրմամբ, երբ թափոն գոյացնողը կազմակերպում է թափոնի փոխադրումը աղբավայր, տեսակավորման, վերամշակման, օգտահանման կենտրոններ:

| Թափոնների հավաքման մեթոդ | Ծառայություններից օգտվող բնակչություն<br>% | Չտեսակավորված հավաքում | Չտեսակավորված հավաքում<br>% |
|---|---|---|---|
| Աղբամաններից | 55 | 6288 | 55 |
| Գրաֆիկով՝ տնից կամ կազմակերպությունից | 45 | 5144 | 45 |

- **Աղբահանություն իրականացնող օպերատորներ**

| Օպերատորի անվանում | Սպասարկվող համայնքներ/ բնակավայրեր | Սպասարկվող տարածքի բնակչության թիվ | Օպերատորի աղբատար մեքենաների թիվը | Օպերատորի աղբատար մեքենաների տեսակը, տարողությունը | Հավաքվող թափոնների տեսակները/ խառը տեսակավորված պլաստիկ, թուղթ..., շինարարակա | Օպերատորի աշխատանքի գնահատական /1-ից 5/ |
|---|---|---|---|---|---|---|

| | | | | | ն և այլ հավաքում | |
|---|---|---|---|---|---|---|
| Իջևանի քաղաքային կոմունալ ծառայություն | Իջևան համայնք | 47337 | ст | Զիլ – 4հատ | Խառը | 4 |
| Իջևանի քաղաքային կոմունալ ծառայություն | Իջևան համայնք | 47337 | | Կամազ – 2 հատ | Խառը | 4 |
| Իջևանի քաղաքային կոմունալ ծառայություն | Իջևան համայնք | 47337 | | Գազ 53 – 1 հատ | Խառը | 4 |
| Իջևանի քաղաքային կոմունալ ծառայություն | Իջևան համայնք | 47337 | | Գազ – 1 հատ | Խառը | 4 |
| Իջևանի քաղաքային կոմունալ ծառայություն | Իջևան համայնք | 47337 | | Մազ – 1 հատ | Խառը | 4 |

- **Աղբի տեղափոխման սխեմաներ**

Այս ենթաբաժնում նկարագրված է թե ինչպես է պլանավորման տարածքում կատարվում աղբահանությունը:

| Թափոնի տեսակ | Հեռավորություն մինչև աղբավայր, կմ |
|---|---|
| Կոշտ կենցաղային թափոն | Իջևան 2-5կմ |
| | Ազատամուտ 3 կմ |
| | Ակնաղբյուր 2 կմ |
| | Աճարկուտ 7 կմ |
| | Այգեհովիտ 3.5 կմ |
| | Աչաջուր 5 կմ |
| | Բերքաբեր 7 կմ |
| | Գանձաքար 3 կմ |
| | Գետահովիտ 4 կմ |
| | Դիտավան 4 կմ |
| | Ենոքավան 7 կմ |
| | Լուսաձոր 3 կմ |
| | Լուսահովիտ 6 կմ |
| | Խաշթառակ 4 կմ |
| | Ն. Ծաղկավան 6 կմ |
| | Կիրանց 7 կմ |
| | Սարիգյուղ 3 կմ |
| | Սևքար 4 կմ |
| | Վազաշեն 4 կմ |

Վերոնշյալ մեքենաները միաժամանակ օգտագործվում են փողոցներից և կանաչապատ տարածքներից գոյացած ավելվածքի տեղափոխման համար: Մեքենաները հատկացվել են համայնքապետարանի կողմից՝ անհատույց շահագործման համար: Բոլոր մեքենաներն աշխատում են սեղմված գազով: Իջևանում ներկայումս առկա են 330 մեծ, 235 փոքր աղբարկղեր: Աղբարկղերը տեղակայված են բանուկ վայրերում, դպրոցների, ԲԲԸ-ների հարևանությամբ:

Աղբարկղերը հիմնականում տեղադրված են ԲԲՇ-ներից 25-30 մ հեռավորության վրա, որպեսզի կանխվի աղբակույտերի գոյացումը ԲԲՇ-ների հարակից տարածքներում: Աղբամաններ կան նաև անհատական բնակելի տների թաղամասերում: Աղբահանությունն իրականացնելու համար քաղաքը բաժանված է երեք տարածքների՝ բոլորն էլ սպասարկվում են ամեն օր: Համայնքում ամենօրյա աղբահանությունը իրականացվում է երկուշաբթիից շաբաթ, 8 մեքենաների միջոցով: Կիրակի օրերին աշխատում է 4 մեքենա: Մեկ մեքենա երկուշաբթիից ուրբաթ օրերին փողոցներից տեղափոխում է քար, շինարարական մնացորդներ և այլն: 8 մեքենաներից յուրաքանչյուրը օրական իրականացնում է երկու երթ: Բնակչության աղբահանության ծառայություն իրականացնող մեքենաները միաժամանակ իրականացնում են նաև իրավաբանական անձանց կողմից արտադրվող աղբի տեղափոխումը:
Ամեն օր աղբահանության ծառայություն մատուցվում է համայնքի մոտ 30 տոկոսին: Երկու օրը մեկ սպասարկվում են հինգ հարկանի շենքերը՝ մեքենան պտտվում է և սուլիչի ազդանշանով աղբը հավաքում: Երեք օրը մեկ սպասարկվում են սեփական տների թաղամասերը, այն կազմում է քաղաքի 50 տոկոսը. իսկ բնակիչների խտության՝ 30-35 տոկոսը: Զանգերի միջոցով աղբահանությունն իրականացվում է երբեմն, եթե նախատեսված ժամկետից արագ է լցվել աղբարկղը

- Աղբավայրեր և աղբանոցներ

Այս ենթաբաժնում նկարագրվում են պլանավորման տարածքում առկա բոլոր աղբավայրերը/աղբանոցները, ինչպես նաև պլանավորման տարածքից դուրս գտնվող այն աղբավայրերը, որոնք սպասարկում եմ պլանավորման տարածքում գտնվող համայնքները և բնակավայրերը:

| Աղբավայրի գտնվելու վայրը | Շահագործող համայնքեր/բնակավայրեր | Աղբավայրի մակերես, հա | Տեղադրվող աղբի տեսակ | Ստեղծման իրավական հիմք/որոշման համար ամսաթիվ | Սեփականության/օգտագործման իրավունք | Շահագործողի անվանում | Աղբի տեղադրման վճար /ՀՀ դրամ/տոննա | Դեպի աղբավայր տանող մուտքի ճանապարհի ատվածի վիճակ |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| Լուսաձոր բնակավայր | ք. Իջևան | 1,9 | խառը | 06.11.2017 | Անհատույց օգտագործման վարձ | Իջևան քաղաքային կոմունալ ծառայության հիմնարկ | 0 | լավ |
| | Գետահովիտ | | խառը | | | | | |
| | Ենոքավան | | խառը | | | | | |
| | Լուսաձոր | | խառը | | | | | |
| | Ակնաղբյուր | | խառը | | | | | |
| Գանձաքար | Գանձաքար | 0,7 | խառը | Ավագանու որոշման համաձայն | Անհատույց օգտագործման վարձ | | | |
| Խաշթառակ | Խաշթառակ | 0,5 | խառը | Ավագանու որոշման համաձայն | Անհատույց օգտագործման վարձ | | | |
| | Լուսահովիտ | | խառը | Ավագանու որոշման համաձայն | | | | |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| Աչաջուր | Աչաջուր | 0,6 | խառը | Ավագանու որոշման համաձայն | Անհատույց օգտագործման վարձ | | | |
| | Դիտավան | | խառը | | | | | |
| | Ազատամուտ | | խառը | | | | | |
| Սարիգյուղ | Սարիգյուղ | | խառը | Ավագանու որոշման համաձայն | Անհատույց օգտագործման վարձ | | | |
| | Սնքար | 0,7 | խառը | | | | | |
| | Բերքաբեր | | խառը | | | | | |
| | Ծաղկավան | | խառը | | | | | |
| | Կիրանց | | խառը | | | | | |
| | Աճարկուտ | | խառը | | | | | |
| Այգեհովիտ | Այգեհովիտ | 0,5 | խառը | Ավագանու որոշման համաձայն | Անհատույց օգտագործման վարձ | | | |
| | Վազաշեն | | խառը | | | | | |

Համայնքից դուրս տարվող աղբը թափվում է վերոնշյալ ուղություններով: Աղբավայերն այժմ կարիք ունեն լիկվիդացման, քանի որ չեն համապատասխանում բնապահպանական և սանիտարական նորմերին: Աղբավայրերում չեն կատարվում աղբի վարակազերծման և դեռատիզացիոն աշխատանքներ: Համայնքապետարանը պարբերաբար կատարում է աղբավայրի բարեկարգման աշխատանքներ, սակայն խնդիրները շատ են և անհրաժեշտ են լուրջ ներդրումներ աղբահահության ոլորտը բարելավելու համար: Աղբավայրերումում վերամշակման հնարավորություններ չկան, տարածքի մաքրման և աղբի տեղադրման աշխատանքները կանոնակարգված չեն: Համայնքապետարանը աշխատանքներ է իրականացնում բնապահպանական ու սանիտարական նորմերին համապատասխան նոր աղբավայրի ստեղծման, իսկ գործող աղբավայրում թափոնների վերամշակման ձեռնարկներ իրականացիելու համար: Աղբի վերամշակման հնարավորություններ Ընդհանուր աղբից տարատեսակ նյութերի առանձնացումը, օգտահանումը կոչվում է տեսակավորում: Տեսակավորումը կարող է իրականացվել ընդհանուր աղբակույտից առանձնացնելով վտանգավոր և երկրորդային կյանք ունեցող նրաւթերը: Երկրորդ՝ յուրաքանչյուր տնտեսություն ինքնուրույն կարող է իրականացնել տեսակավորման գործընթացը՝ ընդհանուր աղբից առանձնացնելով պոլիէթիլենային թաղանթը, PET (պլաստիկ) շիշը, սնունդը, ապակին, մետաղը, թուղթը, կենցաղային- բուսական աղբը: Տեսակավորման արդյունքում օգտահանված նյութերը ենթարկվում են վերամշակման:

- Անձնակազմի կարողությունների գնահատում

| Հմտություն/ոլորտ | Համապատասխան գիտելիքներ ու հմտություն ունեցող աշխատակիցների թիվը | Գիտելիքների և հմտությունների ներկայիս մակարդակ /1- շատ ցածր, 2-ցածր, 3 միջին, 4-բարձր, 5-գերազանց |
|---|---|---|
| Թափոնների կառավարման գիտելիքներ | 3 | 3 |
| ՀՀ օրենսդրության իմացություն | | 4 |
| Տվյալների հավաքագրում | | 3 |
| Համակարգչային քարտեզագրում | | 3 |
| Գնումների կազմակերպում | | 3 |
| Պայմանագրերի կառավարում | | 3 |

| | | |
|---|---|---|
| Գործառնական հմտություններ | | 3 |
| Ֆինանսական վերլուծության իմացություն | | 4 |

## 6.ԻՐԱԶԵԿՎԱԾՈՒԹՅԱՆ ԱՍՏԻՃԱՆ

Թափոնների կայուն կառավարում ապահովելու կարևորագույն նախապայման է ինչպես բնակչության, այնպես էլ կառավարման համար պատասխանատու անձնակազմի իրազեկվածության անհրաժեշտ աստիճանը: Պատասխանատուների իրազեկվածությունը կարևոր է Պլանը մշակելիս խնդիրները ճիշտ գնահատելու, լուծման առաջնահերթությունները հստակ սահմանելու և հետևողականորեն իրականացնելու համար: Բնակչության իրազեկվածությամբ մեծապես պայմանավորված են սկզբնաղբյուրում թափոնների առաջացումը նվազագույնի հասցնելու, տեսակավորված հավաքելու, տեսակը, վերօգտագործելու հաջողությունները՝ հետևապես և Պլանի իրականացման հաջողությունը: Իրազեկվածության աստիճանի գնահատման միջազգայնորեն հաջողված մեթոդ է բնակչության սոցիալական տարբեր խմբերում, տարբեր գործունեություն իրականացնող տնտեսվարողների, ինչպես նաև Պլանի մշակման և իրականացման համար պատասխանատու անձնակազմի շրջանում հարցումներ իրականցնելը՝ նախապես մշակված հարաաշարերով: Հարցաշարերը պետք է ուղղված լինեն թափոնների կառավարման խնդիրների վերաբերյալ առկա գիտելիքների աղբյուրների, տեղեկացվածության, վերաբերմունքի և ակնկալիքների, ինչպես նաև թափոնների կառավարման առկա իրավիճակից բնակիչների և տնտեսվարողների գոհունակության աստիճանի գնահատմանը, ինչպես նաև պարունակեն տեղեկություններ այն լրացնողի/հարցվողի տարիքի, կրթության, մասնագիտության, զբաղվածության/ աշխատավայրի վերաբերյալ: Հարցման արդյունքներն ամփոփվում են աղյուսակում և ներառվում Պլանում: Հարցմանը մասնակցել են Իջևան համայնքի 60 բնակիչ:

| Հարցեր | Իրազեկվածության/գոհունակության աստիճան/1- շատ ցածր, 2-ցածր, 3 միջին, 4-բարձր, 5-գերազանց |
|---|---|
| 1. Թափոնների կառավարման վերաբերյալ առկա գիտելիքների աղբյուրներ | 4 |
| Կրթության տարբեր աստիճաններ (նախադպրոցական, դպրոցական, բուհական) | 4 |
| Սոցիալական ցովազդներ | 3 |
| Պաշտոնական տեղեկատվություն ԶԼՄ-ներով | 3 |
| Քաղաքացիական կազմակերպությունների գործունեություն | 4 |
| 2. Թափոնների կառավարման վերաբերյալ տեղեկացվածություն | 4 |
| Թափոնների թերի կառավարման բնապահպանական ազդեցությունները | 3 |
| Թափոնների թերի կառավարման սոցիալական ազեցությունները | 3 |
| Թափոնների թերի կառավարման տնտեսական ազեցությունները | 3 |
| Թափոնները աղբավայր հեռացնելու ազդեցությունները | 3 |
| Թափոնների հիերարխիայի իմացություն | 3 |
| Օրենսդրության խրախուսող գործիքներ | 4 |
| Օրենսդրության պատժիչ գործիքներ | 4 |
| Թափոնների կառավարման ոլորտում իրականացվող բնապահպանական ծրագրեր | 3 |
| 3. Թափոնների կայուն կառավարման վերաբերմունք և ակնկալիքներ | 3 |
| Թափոնների կայուն կառավարման կարևորությունը | 3 |
| Թափոնների տեսակավորման օգուտները | 4 |
| Թափոնների վերօգտագործման օգուտները | 4 |
| Թափոնների վերամշակման, օգտահանման օգուտները | 4 |
| Իրազեկվածության արշավների օգուտները | 3 |
| 4. Բնակիչների և տնտեսվարողների գոհունակություն | 4 |
| Աղբամանների տեղակայվածություն | 4 |
| Աղբամանների վիճակ | 4 |
| Չտեսակավորված թափոնների հավաքման հաճախականություն | 4 |
| Տեսակավորված թափոնների հավաքում | - |

| | |
|---|---|
| Համայնքի սանիտարական վիճակ | 4 |
| Աղբահանության վճար | 4 |

## 7.ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ ԵՎ ԲՅՈՒՋԵ

Այս բաժնում ներկայացվում է Պլանավորման տարածքում ֆինանսատնտեսական նկարագիրը:

### Ա. Աղբահանության եկամուտների և ծախսերի ընդհանուր նկարագրություն

| Տարի | Աղբահանության սահմանված վարձավճարը, դրամ/անձ | Գործող տնտեսվարող սուբյեկտների թիվը | Աղբահանության համակարգում ընդգրկված տնտեսվարող սուբյեկտների թիվը | Վարձավճարների հավաքման ընդհանուր ծախսեր, դրամ/տարի | Աղբի հավաքման և տեղափոխման ծախս, դրամ/տոննա |
|---|---|---|---|---|---|
| 2021 | 100 | 425 | 403 | 27596512 | 110418665 |
| 2022 | 100 | 484 | 459 | 30884666 | 150663503 |
| 2023 | 100/50 | 750 | 722 | 33232777 | 164923777 |

### Բ.Հավաքագրում և ծախսեր

Այս ենթաբաժնում ներկայացվում է աղբահանության և թափոնների կառավարման եկամուտներն ու ծախսերը վերջին երկու-երեք տարվա ընթացքում:

| Տարի | Եռամյակ | Աղբահանության եկամուտ/հավաքագրում | | | | | | Աղբահանության ծախս /փաստ/ | Սանիտարական մաքրման ծախս /փաստ/ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | Բնակչություն | | | Տնտեսվարող սուբյեկտներ | | | | |
| | | Պլան | Փաստ | % | Պլան | Փաստ | % | | |
| 2021 | 1-ին եռ. | 3500000 | 3042417 | 86,9 | 4750000 | 3259151 | 68,6 | 14699044 | 9578912 |
| | 2-րդ եռ. | 3500000 | 2913009 | 83,2 | 4750000 | 4130264 | 87,0 | 16561355 | 10324718 |
| | 3-րդ եռ. | 3500000 | 2597384 | 74,2 | 4750000 | 3678817 | 77,5 | 19082058 | 11728195 |
| | 4-րդ եռ. | 3500000 | 3272376 | 93,5 | 4750000 | 4705295 | 99,1 | 17316899 | 11127483 |
| Տարեկան 2021 թ. | | 14000000 | 11825186 | 84,5 | 19000000 | 15773527 | 83,0 | 67659356 | 42759309 |
| 2022 | 1-ին եռ. | 3500000 | 3097363 | 88,5 | 4750000 | 3050480 | 64,2 | 19041732 | 10553961 |
| | 2-րդ եռ. | 3500000 | 2780888 | 79,5 | 4750000 | 3902875 | 82,2 | 24242731 | 11068019 |
| | 3-րդ եռ. | 3500000 | 3459352 | 98,8 | 4750000 | 4615251 | 97,2 | 25311205 | 11856505 |
| | 4-րդ եռ. | 3500000 | 4050056 | 115,7 | 4750000 | 5928170 | 124,8 | 34603287 | 13986063 |
| Տարեկան 2022 թ. | | 14000000 | 13386658 | 95,6 | 19000000 | 17008007 | 89,5 | 103198955 | 47464548 |
| 2023 | 1-ին եռ. | 3500000 | 3236440 | 98,5 | 4750000 | 3527160 | 74,3 | 24090194 | 14386752 |
| | 2-րդ եռ. | 3500000 | 3035800 | 86,7 | 4750000 | 4621550 | 97,3 | 25493466 | 12101894 |
| | 3-րդ եռ. | 3500000 | 3428496 | 98,0 | 4750000 | 4850298 | 102,1 | 28769497 | 13096887 |
| | 4-րդ եռ. | 3500000 | 3838225 | 109,7 | 4750000 | 6606216 | 139,1 | 32491613 | 14493474 |
| Տարեկան 2022 թ. | | 14000000 | 13538961 | 96,7 | 19000000 | 19605224 | 103,20 | 110844770 | 54079007 |

### Գ.Թափոնների գործածության հասանելի տարբերակների արժեքներն ըստ տեսակի

| Թափոնի տեսակ | Խառը հավաքում /դր/տ/ | Տեղափոխում /դր/տ/ |
|---|---|---|
| Կոշտ կենցաղային թափոն | 11926 | 2000 |

Դ.Աղբահանության և կոշտ թափոնների կառավարման ինքնարժեքը

Թափոնների կառավարման ինքնարժեքի հաշվարկը Պլանի պարտադիր բաղկացուցիչ մասն է:

| | Կոշտ կենցաղային թափոններ |
|---|---|
| Աշխատուժ, դրամ/տարի | 57614976 |
| Արտահագուստ և գործիքներ, դրամ/տարի | 1465000 |
| Տեխնիկա շահագործում և պահպանում | 15119840 |
| Վառելիքի ծախս | 23255867 |
| Վարչական ծախսեր, դրամ/տարի | 4856023 |
| Բնապահպանական հարկ | 1052620 |
| Թափոն գոյացում տոննա/տարի | 11432 |
| Մեկ անձի կողմից գոյացող թափոնի քանակ /կգ/տարի | 241 |

## ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Յուրաքանչյուր ծրագրի արդյունավետությունն ապահովելու կարևոր գործիք է մշտադիտարկումն ու արդյունքների գնահատումը, ուստի այն Պլանի պարտադիր բաղկացուցիչ մաս է:

### Ա. Աղբահանության և կոշտ թափոնների ներկայիս համակարգի ունակությունը՝ հասնելու նախկինում սահմանված նպատակներին

| Թափոնի տեսակ | Թափոնի առաջացում 1 շնչի հաշվով (կգ/տարի/մարդ) | Թափոնի առաջացում 1 շնչի հաշվով (կգ/տարի/մարդ) | Խառը հավաքում (% ընդհանուր քանակից) | Տեղափոխում (% ընդհանուր քանակից) | Վնասազերծում/վերացում (6 ընդհանուր քանակից) | ) Տեղադրում ոչ սանիտարական աղբավայրում (% ընդհանուր քանակից) |
|---|---|---|---|---|---|---|
| Կոշտ կենցաղային թափոն | 241,5 | 11,4 | 100 | 100 | 80 | 100 |

### Բ. Աղբահանության և կոշտ թափոնների կառավարման ներկայիս համակարգի արդյունավետության գնահատում

Օգտվելով նախորդ բաժինների վերլուծություններից՝ այս ենթաբաժնում վերլուծվում է և գնահատվում է Աղբահանության և կոշտ թափոնների կառավարման համակարգի արդյունավետությունը, և որքանով են արդյունավետ վարչական և կազմակերպչական կառուցվածքը և որոնք են արդյունաավետության վրա բացասաբար ազդող հիմնական պատճառները:

| Դերակատար | Արդյունավետության մակարդակ 1-շատ ցածր, 2-ցածր, 3-միջին, 4-բարձր, 5-գերազանց | Արդյունավետության հիմնական պատճառները | Արդյունավետության բարձրացմանն ուղղված միջոցառումներ կամ փոփոխություններ |
|---|---|---|---|
| ՏԻՄ և ՏԿՄ | 3 | Հատուկ տեխնիկայի պակաս | Հատուկ տեխնիկայի ձեռքբերում |
| Մասնավոր հատված | 3 | Աղբավայրի ոչ բարվոք վիճակ | Աղբավայրի սան. գոտու պահակակետի կառուցում |
| Բնակչություն | 3 | Տեսակավորման բացակայություն | Համայնքների համագործակցություն |

| | | | |
|---|---|---|---|
| | | | աղբի վերամշակման ուղղությամբ |
| Քաղաքացիական կազմակերպություններ | 3 | Աղբամանների պակաս | Նոր աղբամանների ձեռքբերում |

# ԳԼՈՒԽ 2 ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ

## 1.ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐ ԵՎ ԿԱՆԽԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ

### Ա.Կանխատեսումներ

Այս բաժնում նկարագրվում է պլանավորվող տարածքում Պլանի գործողության ընթաղքում կանխատեսվող կամ նախատեսվող փոփոխությունները:

| Կանխատեսելի փոփոխություններ | 2024 | 2025 | 2026 | 2027 | 2028 |
|---|---|---|---|---|---|
| Փաստացի բնակչության ակնկալվող թիվ | 48450 | 48890 | 49400 | 49850 | 50050 |

### Բ.Կանխադրություն

Այս ենթաբաժնում ներկայացվում է ժամանակշրջանում ականկալվող թափոնների գոյացման ցուցանիշների գնահատման հիմնավորումը:

| Թափոնի տեսակ | Գործածության առաջնահերթություն /բարձր, միջին, ցածր/ | Թափոնի ակնկալվող գոյացում՝ մեկ շնչի հաշվով /կգ/ | Թափոնի ակնկալվող գոյացում՝ ընդհանուր քանակ |
|---|---|---|---|
| Կոշտ կենցաղային թափոն | Միջին | 238 | 11,531 |

## 2.ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ԵՎ ԹԻՐԱԽՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ

Այս բաժնում սահմնավում են աղբահանության և կոշտ թաձոնների կառավարման նպատակները և թիրախները պլանավորման ժամանակաշրջանում:

Ա.Թափոնների կառաավարման գլխավոր նպատակներն են՝

- Սկզբնաղբյուրում թափոննեի առաջացման կրճատումը:
- Աղբավայրում տեղադրվող թափոնների քանակի կրճատումը:

### Կարճաժամկետ թիրախներ և դրանց հասնելու կարողություններ

| Թափոնի տեսակ | Գործածություն | Թափոնի ակնկալվող | Թափոնի ակնկալվող | Թափոնների գործածության կարճաժամկետ թիրախներ և դրանց հասնելու կարողություններ /2024-2026թթ/ |
|---|---|---|---|---|

| | | | | Խառը, չտեսակավորված | Տեսակավորված հավաքում | Տեղափոխում (% ընդհանուր քանակից) | Վերօգտագործում/կրկնօգտագործում | Վերամշակում, օգտագործում որպես | Այրում էներգիայի և ջերմության վերականգնման/օգտագործման | Վտանգազերծում/չեզոքացում | Տեղադրում աղբավայրում |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Կոշտ կենցաղային թափոն, այդ թվում՝ | միջին | 238 | 115 311 | 70 | 30 | 70 | 35 | 30 | 5 | 65 | 65 |
| թուղթ | | | | | 20 | | | 20 | | | |
| Պլաստիկ | | | | | 50 | | | 50 | | | |
| ապակի | | | | | 30 | | | 30 | | | |

## Միջնաժամկետ թիրախներ և դրանց հասնելու կարողություններ

| Թափոնի տեսակ | Գործածության ժամկետը | Թափոնի առաջացման ծավալը՝ տարեկան 1 շնչի հաշվով | Թափոնի առաջացման ծավալը՝ ընդ. քանակ | Թափոնների գործածության կարճաժամկետ թիրախներ և դրանց հասնելու կարողություններ /2026-2028թթ/ | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | Խառը, չտեսակավորված հավաքում (% ընդհանուր քանակից) | Տեսակավորված հավաքում | Տեղափոխում (% ընդհանուր քանակից) | Վերօգտագործում/կրկնօգտագործում | Վերամշակում, օգտագործում որպես երկրորդային հումք | Այրում էներգիայի և ջերմության վերականգնման/օգտագործման | Վտանգազերծում/չեզոքացում | Տեղադրում աղբավայրում |
| Կոշտ կենցաղային թափոն, այդ թվում՝ | միջին | 151 | 7558 | 50 | 40 | 50 | 50 | 43 | 7 | 50 | 50 |
| թուղթ | | | | | 20 | | | 20 | | | |
| Պլաստիկ | | | | | 50 | | | 50 | | | |
| ապակի | | | | | 30 | | | 30 | | | |

## Գ. Պատասխանատվության բաշխումը պլանավորման ժամանակահատվածում

- Պլանի մեջ շահառուների ներգրավվածության աստիճան

| Պատասխանատուներ | Իրազեկության բարձրացում /%/ | Խառը հավաքում/ %/ | Տեսակավորված հավաքում/%/ | Տեղափոխում/ %/ | Տեսակավորում/գործարանային /%/ | Վերաօգտագործում/կրկնաօգտագործում /%/ | Վերամշակում/ օգտահանում /%/ | Վտանգավոր թափոնների վնաս | Տեղադրում աղբավայրում /%/ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | | ազերծում /%/ | |
| ՏԻՄ | 50 | 85 | 15 | 60 | | | | 100 | 90 |
| Մասնավոր հատված | 15 | | 70 | 35 | | 20 | 80 | | |
| Արտադրող | 10 | | 5 | 5 | 10 | 80 | 20 | | 10 |
| Բնակչություն | 10 | 5 | 5 | | 90 | | | | |
| Քաղաքացիական կազմակերպություն | 15 | 10 | 5 | | | | | | |

- **Դերերի բաշխում պլանավորման ժամանակահատվածում՝ ըստ թափոնների տեսակների և գործածության ձևերի**

| Պատասխանատուներ | Իրազեկության բարձրացում | Խառը հավաքում | Տեսակավորված հավաքում | Տեղափոխում | Տեսակավորում/գործարանային | Վերաօգտագործում/կրկնաօգտագործում | Վերամշակում/օգտահանում | Վտանգավոր թափոնների վնասազերծում | Տեղադրում աղբավայրում |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Կոշտ կենցաղային թափոն | ՏԻՄ | ՏԻՄ | ՄՀ | ՏԻՄ | ԱՐՏ | ԱՐՏ | ՄՀ | ՏԻՄ | ՏԻՄ |
| Խոշոր եզրաչափերի թափոն | ԱՐՏ | ԱՐՏ | ՄՀ | ՄՀ | ԱՐՏ | ԱՐՏ | ԱՐԸ | ՏԻՄ | ՏԻՄ |

**Դ. Անձնակազմի կարողությունների զարգացու պլանավորման ժամանակաշրջանում**

| Հմտություն/ոլորտ | Համապատասխան գիտելիքներ ու հմտություն ունեցող աշխատակիցների թիվը | Գիտելիքների ու հմտությունների ներկայիս մակարդակ /1-5/ | Գիտելիքների ու հմտությունների թիրախային ապագա մակարդակ/1-5/ |
|---|---|---|---|
| Թափոնների կառավարման գիտելիքներ | 2 | 3 | 4 |
| ՀՀ օրենսդրության իմացություն | 2 | 3 | 4 |
| Տվյալների հավաքագրում | 3 | 4 | 4 |
| Համակարգչային քարտեզագրում | 1 | 4 | 4 |
| Գնումների կազմակերպում | 1 | 4 | 4 |
| Պայմանագրերի կառավարում | 1 | 3 | 4 |
| Գործառնական հմտություններ | 5 | 3 | 4 |
| Ֆինանսական վերլուծության | 1 | 3 | 4 |

**Ե. Հանրային իրազեկություն պլանավորման ժամանակաշրջանում**

Այս ենթաբաժնում ներկայացվում է իրազեկվածության թիրախային ցուցանիշները

| Բնագավառ կամ ոլորտ | Իրազեկվածության ներկայիս մակարդակ 1-5/ | Իրազեկվածության թիրախային ապագա մակարդակ |
|---|---|---|
| Թափոնների կառավարման վերաբերյալ առկա գիտելիքների աղբյուրներ | 4 | 4 |
| Թափոնների կառավարման վերաբերյալ տեղեկատվություն | 4 | 4 |
| Թափոնների թերի կառավարման բնապահպանական ազդեցությունները | 3 | 4 |
| Թափոնների թերի կառավաման սոցիալական ազդեցությունները | 3 | 4 |
| Թափոնների թերի կառավարման տնտեսական ազդեցությունները | 3 | 4 |
| Թափոնները աղբավայր հեռացնելու ազդեցությունները | 3 | 4 |
| Թափոնների հիերարխիայի իմացություն | 3 | 4 |
| Օրենսդրության խրախուսող գործիքներ | 4 | 4 |
| Օրենսդրության պատժիչ գործիքներ | 4 | 4 |
| Թափոնների կառավարման ոլորտում իրականացվող բնապահպանական ծրագրեր | 3 | 4 |
| 3. Թափոնների կառավարման վերաբերմունք և ակնկալիքներ | 3 | 4 |
| Թափոնների կայուն կառավարման կարևորություն | 3 | 4 |
| Թափոնների տեսակավորման օգուտները | 4 | 4 |
| Թափոնների վերօգտագործման օգուտները | 4 | 4 |
| Թափոնների վերամշակման, օգտահանման օգուտները | 4 | 4 |
| Իրազեկվածության արշավների օգուտները | 3 | 4 |

## 3.ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԼԱՆ

Այս բաժնում մշակվում և ներկայացվում են 2-րդ գլխի 2-րդ կետում սահմանված նպատակների և թիրախներին հասնելու համար անհրաժեշտ միջոցառումները, որոնք կարող են վերաբերել կազմակերպչական և ենթակառուցվածքային փոփոխություններին:

### Գործողությունների պլան՝ կարճաժամկետ և միջնաժամկետ թիրախներին հասնելու համար

| Նպատակը՝ ըստ գործածության ձևերի | Կարճաժամկետ թիրախ | Կարճաժամկետ միջոցառում /2024-2026թթ/ | Միջնաժամկետ թիրախ | Միջնաժամկետ միջոցառում/2026-2028/ |
|---|---|---|---|---|
| Խառը հավաքում | Որակյալ աղբահանություն | Բարեկարգել աղբավայրերը, ձեռք բերել նոր տեխնիկա, ավելացնել | Որակյալ աղբահանություն | Կազմակերպել աղբի տեսակավորում և վերամշակում |

| | | աշխատակիցների քանակը | | |
|---|---|---|---|---|

## 4. ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ ԵՎ ԲՅՈՒՋԵ

**Ա.Կարճաժամկետ միջոցառումների բյուջե և ֆինանսավորում**

| Սահմանված թիրախ | Միջոցառման անվանում | Միջոցառման արժեք /հազ. Դրամ/ | Ծախսերն ըստ պլանավորման կարճաժամկետ ժամանակահատվածի համար | | Ծրագրի ֆինանսաորման աղբյուրներ |
|---|---|---|---|---|---|
| | | | 1-ին տարի / հազ. դր/ | 2-րդ տարի / հազ. դր/ | Համայնքային բյուջե հազ. դր/ |
| Աղբավայրի բարեկարգում | Ժամանակակից աղբավայրերի կառուցում | 300000 | 150000 | 150000 | 60000 |
| Աղբահանության կազմակերպում | Աղբահավաք հատուկ տեխնիկա | 250000 | 130000 | 120000 | 50000 |
| Աղբահանության կազմակերպում | Տեսակավորման աղբամանների ձեռքբերում | 80000 | | 80000 | 16000 |

**Բ.Միջնաժամկետ միջոցառումների բյուջե և ֆինանսավորում**

| Սահմանված թիրախ | Միջոցառման անվանում | Միջոցառման արժեք /հազ. Դրամ/ | Ծախսերն ըստ պլանավորման կարճաժամկետ ժամանակահատվածի համար | | | Ծրագրի ֆինանսաորման աղբյուրներ |
|---|---|---|---|---|---|---|
| | | | 3-րդ տարի / հազ. դր/ | 4-րդ տարի / հազ. դր/ | 5-րդ տարի / հազ. դր/ | Համայնքային բյուջե հազ. դր/ |
| Աղբի տեսակավորում | Տեսակավորված աղբի վերամշակում | 500 000 | 100 000 | 200 000 | 200 000 | 100 000 |

## 5.ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԿՈՇՏ ԹԱՓՈՆՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԲՅՈՒՋԵՏԱՎՈՐՈՒՄ

**Ա.Եկամուտների և ծախսերի ընդհանուր նկարագրություն պլանավորման տարածքում նախատեսվող պլանավորման ժամանակաշրջանում**

| Տարի | Բնակչության թիվ | Աղբահանության վարձավճար դրամ/անձ | Գործող տնտեսվարող սուբյեկտների թիվը | Աղբահանության համակարգում ընդգրկված տնտեսվարող սուբյեկտների թիվը | Վարձավճարներ ի հավաքման ընդհանուր, ծախսե, դրամ/տարի | Աղբի հավաքման և տեղափոխման ծախս դրամ/տարի |
|---|---|---|---|---|---|---|
| 1-ին տարի | 48450 | 100 | 750 | 730 | 46000000 | 170000000 |
| 2-րդ տարի | 48890 | 120 | 800 | 770 | 50000000 | 172000000 |
| 3-րդ տարի | 49400 | 120 | 830 | 800 | 51000000 | 180000000 |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 4-րդ տար ի | 49850 | 130 | 850 | 820 | 53000000 | 188000000 |
| 5-րդ տար ի | 50050 | 150 | 900 | 860 | 55000000 | 195000000 |

### Բ.Եկամուտ/Հավաքագրում և Ծախսեր

Պլանավորման տարածքում աղբահանության և թափոնների կառավարման նախեսվող եկամուտներն ու ծախսերը պլանավորման տարիներին ներկայացվում է աղյուսակում:

| Տարի | Աղբահանության եկամուտ/ հավաքագրում | | Եկամուտ վերամշակման ենթակա թափոնների վաճառքից | Աղբահանության ծախս | Սանիտարական մաքրման ծախս |
|---|---|---|---|---|---|
| | Բնակչություն | Տնտեսվարող սուբյեկտներ | | | |
| 1-ին տարի | 20000000 | 26000000 | | 100000000 | 70000000 |
| 2-րդ տարի | 21000000 | 29000000 | | 101000000 | 71000000 |
| 3-րդ տարի | 21000000 | 30000000 | 5000000 | 105000000 | 75000000 |
| 4-րդ տարի | 22000000 | 31000000 | 6000000 | 111000000 | 77000000 |
| 5-րդ տարի | 22000000 | 33000000 | 7000000 | 115000000 | 80000000 |

### Գ. Ընդհանուր եկամուտ և ծախսեր

Պլանավորման տարածքում աղբահանության և թափոնների կառավարման նախեսվող եկամուտներն ու ծախսերի ընդհանու պատկերը պլանավորման տարիներին ներկայացվում է աղյուսակում:

| | Եկամուտներ | Ծախսեր | Տարբերություն |
|---|---|---|---|
| 1-ին տարի | 46000000 | 170000000 | -124000000 |
| 2-րդ տարի | 50000000 | 172000000 | -122000000 |
| 3-րդ տարի | 56000000 | 180000000 | -124000000 |
| 4-րդ տարի | 59000000 | 188000000 | -129000000 |
| 5-րդ տարի | 62000000 | 195000000 | -133000000 |

### Դ.Աղբահանության և կոշտ թափոնների կառավարման նախատեսված ինքնարժեքը՝ ըստ հիմնական հոսքերի

Կոշտ թափոնների կառավարման նախատեսված ինքնարժեքը ըստ հիմնական հոսքերի պլանավորման ժամանակահատվածում ներկայացվում է աղյուսակում:

| | Կոշտ կենցաղային թափոններ |
|---|---|
| Աշխատուժ, դրամ/տարի | 58000000 |
| Արտահագուստ և գործիքներ, դրամ/տարի | 147000 |
| Տեխնիկա շահագործում և պահպանում | 16000000 |
| Վառելիքի ծախս | 24000000 |
| Վարչական ծախսեր, դրամ/տարի | 5000000 |
| Բնապահպանական հարկ | 1300000 |
| Թափոն գոյացում տոննա/տարի | 11531 |
| Մեկ անձի կողմից գոյացող թափոնի քանակ /կգ/տարի | 238 |
| Մեկ անձի հաշվով ինքնարժեք /դրամ.մարդ/ | 3508 |

| Թափոն գոյացնող հիմնական աղբյուրների տեսակները | Քանակ |
|---|---|
| Բնակելի նպատակային նշանակության շինություններ | 7052 |
| Բազմաբնակարան բնակելի շենքեր | 149 |
| Անհատական բնակելի տներ | 69037 |
| Ոչ բնակելի նպատակային նշանակության շինություններ | 722 |
| Առևտրի, հանրային սննդի | 488 |
| Հյուրանոցաին, հյուրատնային տնտեսությունների, սպորտի համար նախատեսված, տրանսպորտի բոլոր տիպերի կայանների շնություններ | 75 |
| Վարչակառավարչական, ֆինանսական, կապի ինչպես նաև առողջապահության համար նախատեսված շինություններ | 34 |
| Արտադրական, արդյունաբերական և գյուղատնտեսական նշանակության շինություններ | 16 |
| Գիտակրթական, մշակութային և գրասենյակային նշանակության շինություններ | 94 |
| Շինություններ, որտեղ իրականացվում է մեկից ավելի, առանձնացված տնտեսական գործունեություն | 15 |